

Ժամանակակից պատմագիրը կը հաստատէ՝ «եւ այր երեւելի, զի վարուքն կարի պարկեշտ եր եւ չորակաց, եւ ինաստօքեանք փարքաւ, բանիքուն եւ յոյժ հանձարեղ, վասն որոյ անուանի եր ևս ի սեջ աշխարհի, որ անեւայն աշխարհ կախեալ կային զնմանի» (Գրքի Յեզեքիէլ, էջ 366): Ան էր «այր անարկու եւ յոյժ խրրոյս եւ դժուարահաւան» (Զեքիէլ, էջ 287) բայց «այր զիսնական ևրքից եւ արսախոց եւ յաղթող ախոյեան ընդդէմ մաքսոողաց ճշմարտութեան» (Զեքիէլ, էջ 11):

Այնպէս որ զարմանալի պէտք չէ թուի որ «Գրիգոր Կեսարացի հագիւ թե Կ. Պողիս երեւցաւ Երուսաղեմի ևուիրակութեան պաշտօնով, անեմք շահեցաւ իւր փառասոր կերպարանով, ձգնողական կեանքով եւ զիսնական արժանիքով» (Օրմանեան, Աշխարհագր., էջ 2310):

Ժողովուրդը տեսնելով անոր իմաստութիւնը և «վարքն ձգնաւորութեան», ինչպէս Յակոբ քհ. Կեսարացի կ'ըսէ, ամէնքն միաբան զինքը պատրիարք ընտրեցին փոխանակ Յովհաննէս Խուլին և «գրեցին սո կարողիկան Ս. Էջմիածնի ձեռնադրեղ իւրեանց առաջնորդ» (Յակոբ քհ. Կ.):

Գրիգոր Կեսարացի այսպէս դարձաւ Կ. Պոլսոյ պատրիարք և անմիջապէս Կ. Պոլիսէն ճամբայ ելաւ երթալու համար